

13353

891.99

U-33

1907

ՅՐԱՅԻՆ ԴԱՒՅՆԱԿԱՆ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՐԱՅԻ ՎՐԱՅԻ ՎՐԱՅԻ ՎՐԱՅԻ

# ՍՐԲՈՒՀԻ ՇՈՒՇԱՆԻԿ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ  
ԿՈՎԱԿԱՆՈՒԹԻՑԱԿԱՆ—ՄԱՐԴԱԲՈՆՈԿԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

Դատարանական գույքի պահպանի համար



1907 ԳԻՒԴՈՐԻՆ ՔԱՅ. ՄԱՏԻՆԵԱՆՑ  
ԹԻՖԼԻՍ ԵԼԵԿՏՐԱԿԱՐ ՏՈՒՐԱՆ ՕՐ. 1. ԱՐԱԽԵԱՆ ՊՈԼԻՑԵԱԿ. 7 1907 (65)

2003

391.99

Մ-33

ար.

ՆՈՐԻՆ Ա. ՕՇՈՒԹԵԱՆ

ՎԵՐԱՓԱՌ ԵՒ ԾԱՅՐԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

(100+) 16446-58

(39108)

S. S. ՄԿՐՏՉԻ Ա.

որդինական խոնարհութեամբ

նուիրում է

աշխատասիրողը.

շաբաթ իրական բանարկան ուրեմն բանար և առաջական անշահ ու ու պատուի պար պատար և զարդար այս պատահական պատահական գաղաքար բանար ան աճրկուն մասն դարձնեց առաջ բան բան բանար ան անգանար ու ու պատու մահակ

### ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՎԵՀԱՓԱՌ ՏՀՌ.

**Զերդ Վեհափառութեան սուբք անուանն եմ նուիրում սոյն փոքրիկ գրաւոր աշխատութիւնս ի յիշատակ ութ տարի առաջ Վեհափառութեանդ չնորհաբեր այցելութեան այն սրբավայրը. ուր այժմ 578 թուականից սկսած հանգստանում են սրբուհւոյ Շուշանիկի նշխարները: Նուաստս տեսնելով թէ ինչպէս Վեհափառութիւնդ նուիրական դամբարանի առաջ մարմնով խոնարհած, իսկ կարճառօտ աղօթքի մրմունջովդ հոգւով վերացած հայ կանանց մէջ այն անզուգականի հոգւոյ հետ, որը իւր հայր Վարդանի նման հալրենասիրական և կրօնասիրական հոգւով վառուած վեց տարի շարունակ բանտի մէջ մարտիրոսական կեանք վարելուց յետոյ լուսեղին պսակի արժանացաւ: Սրբուհի Շուշանիկն էր այն հինգերորդ դարու հայ կանանց մէջ աւելի քաջամարտիկ զինւորուհին, որը իւր գերբնական ուժով կռապաշտութեան դէմ մարտնչեց: Եւ երբ այն նուիրական սըրբավայրից Վեհափառութիւնդ բարեհաճեց այցելել նաև նոյն սրբավայրի մօտակայ-**

քում գտնւող սուրբ Վարդանայ անունով նորակառոց հայոց մատուռը, ուր ի նշան գոհունակութեանդ դարձաք նուաստիս արժանացնելու «Օքհնեալ ըլաս, խորհրդաւոր անուն ընտրելես մատուռին համար, ուր դամբարան Շուշանայ՝ անդ և յիշատակ Վարդանայ» քաղցրահնչիւն բառերը։ Վեհափառութեանդ շնորհաբեր այցելութիւնը և նուաստիս շնորհած սուրբ օրհնութիւնը ոգեսորեց նուաստիս տկար զրչովս համառօտ ի լոյս ածել մեր ամենիս սիրելի Վարդան Մամիկոնեանի դուստր Շուշանայ վսեմ և գաղափարական գործերը։

Սրբուհի Շուշանայ դամբարանի շուրջը քսանամեայ պաշտօնավարութեանս ժամանակականատես եմ եղած այն բազմաթիւ ուխտաւորներին, որոնք յաճախել են այն նուիրական դամբարանը թէ հոգեսոր և թէ աշխարհական դասակարգերից, եղել են նաև բարձրաստիճան եկեղեցականներից, և որ աւելի վեր է՝ գերադասքարձրաստիճան ուխտաւոր Վեհիդ ևս բաղդունեցայ տեմնելու, որոյ առթիւ Վեհափառութեանդ սուրբ անունն եմ նուիրում հինգերորդ դարու հայ կնոջ մի պատկեր՝ «Սրբուհի Շուշանիկ» գրքոյկը։

Մնամ Վեհափառութեանդ  
ամենախոնարհ ծառայ  
Գրիգորիս քահանայ Մատինեանց

### ՄՐԲՈՒՀԻ ՇՈՒՇԱՆԻԿ:

Վ ԴԱՐՈՒ ՀԱՅ ԿՆՈՑ ՄԻ ՊԱՏԿԵՐ։

Հայոց Արշակունեաց թագաւորութիւնը պարսիկների ձեռքով վերջացաւ Փրկչական 429 թուին։ Արշակունեաց գահակալներից վերջին թագաւորը Արտաշէս Գ-ն էր, որը իւր զեղս կեանքով ատելի դարձաւ Հայոց նախարարներին, որոնք պարսից Վոամ թագաւորի առաջ ամբաստանեցին Արտաշէսին և նորանց ցանկութիւնով Վոամը գահնեց արաւ Արտաշէսին և նորա փոխարէն Հայոց վերայ այլ ևս առանձին թագաւոր չը կարգեց, այլ Հայոց աշխարհը կառավարւում էր պարսից մարզպանների ձեռքով, որոնք Հայոց աշխարհից հարկերը ժողովելով հացնում էին պարսից Տիգրօն մայրաքաքը, իսկ Հայոց թագաւորութեան դէկը զինւորական մասերով գտնւում էր Հայոց նախարարների անմիջական իշխանութեան ներքոյ։

Հայոց ազգի այսպիսի դառը ժամանակ՝ երբ Արշակունեաց գահակալներից թափուր էր

մնացել, այդ ժամանակ հայ հոգեորականութիւնը աշխարհականների հետ ձեռք ձեռքի տուած իբրև պահապան հրեշտակներ, հսկում էին Հայոց ժողովրդի վերայ, Զորբորդ դարու սկզբից հայոց աշխարհից անպակաս էին անձնանուէր կաթողիկոսներ և եպիսկոպոսներ, ժիր արիջան վարդապետներով և քահանաներով, որոնց քարոզութիւնով հայերին քրիստոնեական կրօնի մէջ ամուր պահեցին:

Պարիսիկները Հայոց թագաւորութեան վերջ տալով չը բաւականացան, նրանք ձեռնամուխ եղան նաև հայերին քրիստոնեական կրօնից հեռացնելուն և զրադաշտական կրօնը 1) տարածելու ամեն ջանք գործ դրին ոչ միայն Հայոց աշխարհի մէջ՝ այլ և Աղուանից և Վրաց աշխարհներում: Պարսից Յազկերդ Բ—էր, որը կամեցաւ զրադաշտական կրօնով բոլորին ձուլել կրապաշտութիւնով մի ազգ գարձնելու մտքով, այս պատճառով նա հրովարտակներ ուղարկեց Պարսկաստանի ամեն կողմերը՝ նոյնպէս և Հայոց աշխարհի: Հրովարտակներ ուղարկուեց նաև Վրաց և Աղուանից աշխարհները և իւր մօտ հրաւիրեց այդ երկիրների իշխողներին զրադաշտական կրօնը ընդունել տալու համար: Յազկերտը իւր հրովարտակի ոյժը առաջին անգամ փորձեց գործ դնելու Հայոց աշխարհի վերայ, որից առաջ եկաւ 451 թուին Վարդանանց զօրավարաց սուրբ

պատերազմը, ուր որ 1036 նահատակների հետ պատերազմի դաշտի մէջ ընկաւ Վարդան Մամիկոնեան քաջ զօրավարը իննը քաջանաւն երևելի նախորարներով Աւարայրի դաշտումը Տղմուտ գետի ափին, որոնք սուրբ «Վարդանանք» կոչւեցան: Պատերազմից առաջ Յազկերտը իւր մօտ հրովարտակով կանչեց Հայոց բոլոր նախարարներին, որի մօտ եկել էին նաև Աղուանից Վաչէ թագաւորը և Վրաց աշխարհի բղեշն Վազգէն իշխանը: Նա խիստ սպառնալիքով հարկադրեց նրանց ուրանալ քրիստոնէութիւնը և զրադաշտական կրօնը ընդունել: Հայոց նախարարները առ երես ընդունեցին Յազկերտի սաստիկ հրամանը: Հայ նախարարների օրինակին հետեւ նաև Աղուանից Վաչէ թագաւորը, որոնք իրանց երկիրը վերապառնալով հաստատ պահեցին նախկին քրիստոնէական կրօնը և պատերազմներով դիմադրեցին Յազկերտին և յաղթող հանդիսացան: Յազկերտին ներկայացողներից միմիայն Վրաց Վազգէն իշխանը հրապուրուելով պարսիկ գահակալի խոստացած շնորհներից, սրտանց ուրացաւ քրիստոնէական հաւատը: Յազկերտը նորան իւր զոքանչին կնութեան տուաւ և մեծ պատւով յետ ուղարկեց Վրաստան:

Վազգէն իշխանը, որը առաջուց ամուսնացած էր հայոց սպարապետ Վարդան Մամիկո-

նեանի դուսար Շուշանիկի հետ, այժմ նա քըիստօնէութիւնն ուրանալով և մի այլ կռապաշտ պլարսկութոյ հետ ամուսնանալով Վրաստան է գալիս իւր հետ ունենալով մոգերի բազմութիւն։ Վազգէն իշխանը ոչ միայն բուն Վրաստանին էր իշխում, այլ և Աբխազէթին և Սվանէթին, արևմտեան կողմից էլ իմէրէթիալին մինչև կողքիսացւոց (Մինգրէիա) երկիրը, իսկ արևելեան կողմից Հայոց աշխարհքի Գուգարք նահանգին, որով նորա երկիրը սահմանակից էր դառնում պարսկական Հայաստանին։ Վազգէնը ինքը անուանի բարեպաշտ Աշուշա Բըգէշի որդին էր, որի ունեցած իշխանական ծագումը և տիրած երկրների ընդարձակութիւնը՝ իրաւունք էր տալիս նորան Վրաստանի արքայ կոչւելու և շատ մօտիկ բարեկամական յարաբերութիւն ունէր Հայոց Արշակունի թաղաւորների հետ և Մամիկոնեանների հետ խնամիութիւն։ \* Անա այսպիսի մօտիկ յարաբերութիւն ունենալն էր, որ Վազգէն իշխանը Հայոց աշխարհի սպարապետի դուսար Շուշանիկի հետ ամուսնութեան կապկապեց։ Այս ամուսնութիւնից նա ունեցաւ երեք ուստր և մէկ աղջիկ քրիստօնէական հաւատի մէջ սնուած իրանց բարեպաշտ

\* Հմայեակ Մամիկոնեանի կին Զուիկը Վազգէնի մայր Անուշ-Վուամի քոյրն է եղել։

մօր Շուշանիկի հսկողութեան տակ։

Շուշանիկը սերւում էր Հայոց նշանաւոր կաթողիկոս Ս. Սահակ պարթև հայրապետից, նա էր Սահակ կաթողիկոսի դուսար Սահական ուշիթուր, նրա մօր անունն էր Գուրիկ, որ նոյնպէս հայ նախարարական ցեղից էր սերուած։ Շուշանիկի ծննդեան սկզբնական անունը եղել է Վարդենի, որ լետոյ փոխել են նորա աննման գեղեցկութեան համար նմանեցրել են շուշան ծաղկին, որով ստացել է Շուշան-Շուշանիկ երկրորդ անունը։ Այսպիսով Շուշանիկը հօր կողմից սերուած էր Տարօնոյ իշխան բարեպաշտ Մամիկոնեանց տոհմից, իսկ իւր մեծ մօր (տատի) կողմից անուանի Պարթևական տոհմից։ Եւ անա այսպիսի գեղեցիկ շառաւիղը քրիստօնէական կրօնի զինւորունի է դառնում։ Շուշանիկի ամուսնական տարիները կարճատեկ է լինում Վազգէնի հետ, քանի որ նա քիստօնեայ էր, և երբ Վազգէնը ուրացաւ քրիստօնէական հաւատը, Շուշանիկը իսկոյն լուծուած համարեց իւր ունեցած ամուսնական կապը սաելով առաքեալի խօսքերը։ «Ինչ հաղորդութիւն կարող է ունենալ լոյսը խաւարի հեա։»

Երբ Շուշանիկին համբաւ բերին, որ Վազգէնը ուրանալով քրիստօնէական կրօնը իւր նոր ամուսնոյ և պարսից երեւլիների հետ Մցիւթ մայրաքաղաքին է մօտեցել, նա իսկոյն

թողեց արքունի պալատը և գնաց բնակուեց ե-  
կեղեցուն կից սենեակներից մէկի մէջ, ուր զի-  
շեր ցերեկ իւր օրեւը աղօթքով էր անցկացնում,  
որ գոնէ Աստուծոյ օգնութիւնով ազատէ թէ  
իրան և թէ զաւակներին վրահամող վտանգնե-  
րից: «Տէր Յիսուս» աղօթում էր նա: «Քեզ եմ  
յանձնում ինձ՝ և իմ զաւակներիս, դու որ Տէրդ  
ես և Աստած օգնիր մեզ. որովհետեւ զալիս է  
ուրացող ամբարիշտը որսալու ինձ և զաւակնե-  
րիս կորստեան անդունդը ձգելու համար: Ես  
պատրաստ եմ չարչարուել և մեռնել քո ան-  
ւանդ համար: Քան թէ ուրացողի կամքին հնա-  
գանդուել: Տէր, եթէ արժան կը համարես զա-  
ւակներիս մալ կը կին ծնուած սսւրբ աւազանի  
մէջ՝ պահիր նրանց անսարատ. որովհետեւ ես զա-  
ւակներիս արդարութեան ճանապարհներ ցոյց  
տալով եմ մեծացրել, պահիր նրանց, որ ոչ թէ  
արարածին պաշտեն, այլ Արարչիդ:»

Շուշանիկը աւելի տրտմեց Վազգէնի նոր  
ամուսին ունենալու համար, նա մեծ մտատան-  
ջութեան մէջ էր լինում իւր զաւակների հա-  
մար, որ մի գուցէ Վազգէնը նոր ամուսնոյ  
դրդմամբ զաւակներին ըրիստօնէտկան կը օնից  
հեռացնէ: Նա լալով ասում էր. «Ես Աստուծով  
կապրիմ և երբէք չեմ անցնի իմ հայրերի դա-  
ւանած կը օնից, և եթէ մեռնեմ Քրիստոսի ա-  
նուան համար յօժար եմ, բայց թէ մահիցս ա-

ռաջ զաւակներիս ուրացած տեսնեմ, դա կը լի-  
նի ինձ համար մի անտանելի ցաւ:» Զաւակա-  
սէր մայրը այսպիսի աղօթքով և մտատանջու-  
թիւններով էր ժամեր անցկացնում, մինչև ան-  
գամ կերակուր էլ չէր ընդունում:

Երբ Վազգէնը մտնում է իւր պալատը և  
Շուշանիկին չի դանում այնտեղ՝ խիստ բարկա-  
նում է թէ ինչու նա անպատուեց նրա արքա-  
յական պատիւը և պարսից մեծամեծների առաջ  
պալատի դռան մօտ իրան չդիմաւորեց: Վազգէ-  
նը կանչում է իւր մօտ եպիսկոպոսին և դրան  
(պալատի) քահանային և քաղցր խօսքերով հա-  
մոզում է նրանց, որ նոքա իրանից չը խորշեն,  
նա խոստանում էր նրանց առաջուայ բարու-  
թիւններից աւելի շատ բարութիւններ անել: Սորանից յետոյ Վազգէնը պատգամ ուղարկեց  
Շուշանիկի մօտ, որ նա իւր կամքին հաւանի և  
հնագանդուի, որի համար ունեցած պատուից  
աւելի մեծ պատիւնների կարժանացնէ նրան:

Եպիսկոպոսն ու քահանան գնում են Վազ-  
գէնի եղբայր Զոջիկ իշխանի մօտ և յայտնում  
են նորան Վազգէնի պատգամները և երեքը մի-  
ասին գնում են Շուշանիկի մօտ՝ լացով ու սգով  
յայտնում են ուրացող ամուսնու պատգամները:  
Շուշանիկը եպիսկոպոսից լսելով Վազգէնի պատ-  
գամները խիստ խօսքերով յանդիմանում է նո-  
րան ասելով. «Եւ դու այդպէս ես հրամայում, որ

Ես Աստուած ուրացող ամբարիշտ մարդու հետ  
միանամ, աւաղ թշուառիս, որ ինձ յորդորող և  
սփոփող չգտայ, ինձ միայն մնում է սրբութիւ-  
նով և արդարութիւնով պաշտել կենգանի Աս-  
տուածը և ընդունել ամեն վտանգները ու չար-  
չարանքները, որոնք կը գան իմ վերայ ուրացող  
մարդու ձեռքով։ Այս խօսքերին եպիսկոպոսը  
ասում է. «Քո ասածներդ ճշմարիտ են, բայց  
պէտք է մտածել, որ Վազգէնը իւր բարկու-  
թիւնը աւելի կը սաստկացնէ և քեզ վերայ և  
ժողովրդի գլխաւորների վերայ, բայց եթէ ենես  
այստեղից և պալատ գնաս, դուցէ դորանով նո-  
րա բարկութիւնը դադարի։» Միենոն էր կը կըրկ-  
նում և Զոջիկ իշխանը և աղաչում էր Շուշա-  
նիկին, որ նա իրանց խորհրդին հետեւի։ Շուշա-  
նիկը ակամայ համաձայնում է նրանց հետ և  
ասում է. «Գիտեմ, որ ուրացողը ինձ չարչա-  
րանքի տակ կը ձգէ և դուք ամենքդ ձեր տե-  
ղերը կերթաք, իսկ ես կը մնամ միայնակ, բայց  
ոչ անտէր, քանի որ Տէրն է իմ օգնականը։»  
Ասում է Շուշանիկը և դնում արքունական պա-  
լատը։ Նա չի մտնում իւր սենեակը, այլ պա-  
լատին կից մի սենեակ մտնելով սկսում է առ  
Աստուած աղօթել, որպէս զի բարի միտք շնոր-  
հուի ուրացող ամումնուն, որով պատուի իւր  
կեանքը ուրացողի բարկութիւնից։ Այսպէս ա-  
ղօթքով նա յիշեալ տնակի մէջ անսուազ մնալով

է անցկացնում։ Երրորդ օրը երեկոյեան ուրացող  
Վազգէնը ուղարկում է Զոջիկ իշխանին Շուշա-  
նիկի մօտ և ընթրիքի հրաւիրում։ Շուշանիկը  
սկզբում չէր ուզում ընդունել ուրացողի հրա-  
ւիրը, բայց յետոյ Զոջիկ իշխանի շատ աղա-  
չանքի վերայ զիջաւ, և շատ տրտմած գնաց  
նստեց ընթրիքի սեղանի մօտ իւր համար որո-  
շած տեղը։ Նա ոչոքի հետ չէր խօսում, այլ  
միայն սուր խէթերով Վազգէնին յանդիմանում  
էր նրա արածների համար։ Նա իւր հետ տա-  
րել էր փոքրիկ աւետարանը, որ իւր պապ Ա.  
Սահակից էր ժառանգել, ծոցի մէջ պահած նո-  
րա գօրութեան և միջնորդութեանն էր ապաւի-  
նած, արտասուքը լիքը աչքերով նստած աջ ու  
ձախ էր նայում։ Նա ոչ կերաւ և ոչ խմեց, այլ  
միայն բաւականանում էր իւր զաւակների  
խանդակաթ սիրով, որոնք նորա դիմացն էին  
շարուել։ Վազգէնը ընթրիքի ժամանակ զսպեց  
իւր բարկութիւնով լի սիրաը, և երբ կերուխու-  
մից յետոյ ամենքը իրանց տեղերը ցրուեցան,  
Շուշանիկն էլ գնաց իւր նոր ընտրած տնակը։  
Այստեղ անձամբ խիստ կատաղած եկաւ Վազ-  
գէնը, նա հրամայեց ծառաներին, որ յանդուգ  
կնոջը դէպի պալատի սենեակը քարշ տան։ Նա  
իւր բոռնցքով զարկում էր Շուշանիկի գլխին  
և թիկունքներին, իսկ Շուշանիկը անօգնական  
մնացած՝ միմիայն աղօթում էր ասելով-«Տէր

Յիսուս, դու ինձ օգնիր:» Նա տարուեց պալատի սենեակը:


Շուշանիկի կրած տանջանքների մասին՝ Զոջիկ իշխանը տեղեկութիւն չունէր, և երբ նրան այս մասին լայտնեցին՝ նա իսկոյն վազելով եկաւ պալատը Վազգէնի մօտ: Նա չը կարողացաւ Վազգէնի բարկութիւնը իջեցնել, այլ մեծ արհամարանքով Վազգէնը հեռեցնում էր եղօրը և նոյն իսկ նորա ներկալութեան ժամանակ բռունցքով աւելի հարուածներ էր հասցնում Շուշանիկի գլխին: Գազանացած ամուսինը այնքան սաստկացրեց հարուածները, մինչեւ որ կենդանի նահատակը անզգայ ընկնում է յատակի վերայ: Վազգէնը աւելի զայրացած հայնոյեց ճշմարիտ Աստըծուն և իւր աներ Վարդանի անունը անարժան բառերով անպատուեց: Նա տեսնելով, որ կենդանի նահատակը յատակի վերայ անզգայ ընկած է, կարծեց թէ մեռել է. ուստի հրամայեց իւր ծառաներին քարշ տալով Շուշանիկին տանեն նորա բնակած սենեակը, որը իսկոյն կատարուեց:

Միւս օր առաւօտը գազանացած Վազգէնը գնում է իւր զոհի սենեակի մօտ իմանալու նորա դրութիւնը, և երբ իմացաւ, որ նա դեռ կենդանի է, նորա սենեակի դռանը պահապաններ կարգեց, որ ոչ ոքի թոյլ չտան նորա մօտ մտնելու, ոչ կին և ոչ աղամարդ, որ իւր զոհը

նոյն տանջանքով անօգնական մեռնի:

Վազգէնի հեռանալուց յետոյ Շուշանիկի սենեակին մօտենում է դրան քահանան և խընդրում է պահապաններին, որ իրան չ'արգելեն տանջւող զոհին տեսնելու, և երբ նա մօտեցաւ տեսաւ Շուշանիկի այտերը կապտած և ուռած, նորա ճակատի վերայ երեսում էին արեան բծերը, քահանան սկսեց դառնապէս լալ, իսկ երանելին ասում է դրան քահանացին. «Ինձ վերայ մի լար, որովհետեւ առանց չարչարանաց հանդիսի մարդը չի կարող Աստուծոյ առաջլարդարանալ:» Քահանան թախանձանքով խընդրում է երանելուն, որ կազդուրուելու համար մի քիչ կերպակուր ընդունի, իսկ երանելին թէւ սկզբումը չէր ուզում ընդունել, բայց յետոյ համաձայնեց, կերաւ ու խմեց պահապանի տըւած գարէ հացը ու ջուրը, որը Վազգէնի պատէրով էր տրուում: Վշտահար քահանան Վազգէնի երկիւղից շուտով հեռացաւ երանելոյ սենեակի մօտից:

Այս ժամանակներում Վազգէնին լուր հասաւ, որ լեռնականների մի մեծ բազմութիւն պատրաստուել է ասպատակել Մցիսէթ քաղաքի վերայ: Երկիւղը սաստիկ էր: Վազգէնը իւր զաւակներին ուղարկում է արքուն գէտի միւս կողմը գանւող ամրոցի մէջ պահեղու, և ասպատակող լեռնականներից աւելի ապահով պահելու համար



հրամայեց նոյն ամրոցը զօրքնվ շրջապատել։  
Վազգէնի զաւակներին կուր գետից անցկացնելու ժամանակ՝ նըսանցից մէկը ջրի հոսանքից տարուեց ջրասոյզ եղաւ, որը Վազգէնին մեծ ցաւ և սուդ պատճառեց։ Որդու կորուսոր և լեռնականների երկիւղը՝ իջեցրեց նորան իւր անգուսպ բարկութիւնից, և նա առանձնացած տիրութեան մէջ էր լինում։ Այդ ժամանակ նա խսպառ փոխուեց, հրամայեց, որ Շուշանիկին այն սենեակից հանեն և տանեն եպիսկոպոսի ապարանքը, որը եկեղեցւոյ մօտն էր, և առանձին պահապան նշանակեց նրա մօտ, որ Շուշանիկը իրաւունք չունենայ մի այլ տեղ դնալու։ Երանելի կենդանի նահատակը ակամայ կատարում էր նրա հրամանը։

Զար Վազգէնին միսիթարելու համար եկան նորա մօտ վրաց նախարարները, պարսից մեծամեծները և մարզպանը։ Երբ սրանք ամեն մէկը իրանց տեղերը ցրուեցան՝ Վազգէնը աւելի մեղմացրեց իւր բարկութիւնը։ Նա փորձեց երկրորդ անգամ մարդ ուղարկելու Շուշանիկի մօտ և նորան քաղցրութիւնով համոզելու, որ նա թողնէ յամառութիւնը և իւր կամքին հնագանդուի, որի համար նա երդումով խոստանում էր նորան առաջուանից աւելի պարզեներ և պատիւներ, իսկ երանելի կենդանի նահատակը յանձը չառաւ ապրելու Աստծուն ուրացող

մարդու հետ, այլ իրան ունեցած զգեստները և թանկագին զարդերը մի կապոց դարձեց և ուղարկեց ուրացող ամուսնու մօտ ասելով թէ այն մարդը, որ լոյսը խաւարի հետ է փոխում, ճշմարտութիւնը ստութեան հետ, Արարիչ Աստծուն արարածի հետ, նա չի կարող նորա հետ ամուսնական լուծ քաշել։ «Ես», ասում է Շուշանիկը. «Քրիստոսին եմ ընծայուել, չեմ ցանկանում ոչ փառք և ոչ պատիւ ուրացողի ձեռքից, այլ աւելի լաւ կը համարիմ չարչարանքով այս աշխարհիցից անցկենամ միւս աշխարհ և մեծ թագաւորի մօտ ապրեմ։ Ես այսպէս եմ վճռել և պիտի ալսպէս էլ լինի, իսկ ինչ որ գուանելուե՞շուտով արա, ես պատրաստ եմ մեռնելու քան հայրերի աւանդութիւնից անցնելու։»

Երբ Վազգէնին ներկայացրին Շուշանիկի ուղարկած զարդերն ու զգեստները և պատմեցին երանելու ասածները, ամբարիշտ ուրացողը աւելի յուղուեց ու վճռեց, որ նորա տանջանքները աւելի սաստկացնէ։ Նա շատ սպասաւորներով շտապեց գնաց Շուշանիկի մօտ տեսաւ, որ նա եկեղեցում աղօթում էր, սկսեց բռունցքով ծեծել նորան նոյն իսկ եկեղեցւոյ մէջ, և մազերից քարշ տալով գուրս հանեց նորան այնտեղից։ Ոչոք չէր համարձակում գալիք ձեռքից Քրիստոսի գառանը ազատելու։ Քահանաներից մէկը համարձակութիւնը ունեցաւ Վազգէնին

ասելու թէ ինչո՞ւ է նա անողորմ չարչարում  
մի անմեղ տիկնոջ, չէ որ նա իւր զաւակաց  
մայն է: Գազանացած ուրացողը յարձակուեց  
նաև քահանայի վերայ նորան բռունցքով այն-  
պէս ծեծեց, որ ներկայ եղող մարդիկ և կա-  
նայք վախեցան և սկսան լալ և աղաղակ բարձրաց-  
նել, իսկ նա աջ ու ձախ պատահողին բռունցքով  
խփում էր, յետոյ մօտենում էր երանելուն և  
քարշէր տալիս քարքարոտ և տատասքով լի-  
դետնի վերայ, այնպէս, որ երանելու վէրքերից  
թափած արիւնը գետնի վերայ երևում էր: Ու-  
րացողը հրամայում է տանել նորան իւր պալատը,  
ուր որ և ինքը շտապեց նորա ետևից գնալու-  
նա պալատումը ևս շարունակեց անմեղ զոհի  
վերայ գործ դնել բռունցքի հարուածները: Իսկ  
Քրիստոսի երանելի աղախինը լուսում էր, միան-  
աշխատում էր կըծկուել իւր պատառոտած հան-  
դերձի մէջ: Ամբարիշուր սորանով չը բաւակա-  
նացաւ, այլ հրամայեց երկաթի կապանքով կա-  
պել անմեղ զոհի ձեռքերը և ոտքերը և ասել.  
«Թո՞ն օգնէ քեզ Քրիստոսը և քո հայրերի աղօթ-  
քը:» Այս ասելուց յետոյ Վազգէնը հրամայում  
է, որ Շուշանիկին կտպած բանտը տանեն, որ  
ինքը նորան այլևս քաղաքում չը տեսնի, որ նա  
կեանքի մնացած օրերը բանտի մէջ քաշի:

Սորանից յետոյ ամբարիշտ ուրացողը հրա-  
մայում է, որ զգուշութիւնով հսկեն երանելի:

բանտարկեալին և որոշած գարէհացից և ջրից  
զատ՝ ուրիշ բան չը տան ուտելու: Այս կար-  
գագրութիւնը անելուց յետոյ ինքը գարձաւ իւր  
տեղը գնաց: Նորա արած կարգագրութիւնը  
կատարուեց: Շուշանիկին շղթայակապ տարան  
Ուփրէթի բերդը և մի փոքր մութ սենակի մէջ  
բանտարկեցին և խիստ հսկողութեան տակ  
պահուեց:

Շուշանիկի տանջանքներ կըելու ժամանակ,  
Վազգէնի եղբայր Զոջիկ իշխանը քաղաքից բա-  
ցակայ էր, և երբ նա ճանապարհորդութիւնից  
վերադարձաւ, նորան պատմեցին Շուշանիկի  
երկրորդ անգամ կրած տանջանքների և բան-  
տարկութեան մասին: Նա շատ տրտմեց և որո-  
շեց, որ մի հնար գտնի Շուշանիկի կրած տան-  
ջանքները թեթևացնելու համար:

Այդ ժամանակ Վազգէնը պատրաստում  
էր զօրքի հետ ձորայի (Դէրբէնտի) կողմերը գը-  
նալ: Զոջիկ իշխանը յարմար ժամանակ գտաւ  
իւր եղբօրից խնդրելու, որ Շուշանիկի տան-  
ջանքները թեթևացնէ, նորա ունեցած շղթա-  
ները արձակէ, իսկ ամբարիշտ ուրացողը չէր  
ուզում լսել Զոջիկի խնդրելը, հազիւ թէ համա-  
ձանեց նա միմիայն Շուշանիկի պարանոցից  
հեռացնել երկաթէ շղթան, իսկ ոտքերի շղթան  
թողնել այնպէս մինչև նորա մահը:

Վազգէնը ձորայի կողմը գնալով՝ շատ եր-

կար ժամանակ տեսք մինչև նորա վերագառնալը։ Նորա բացակայութիւնից օգուտ քաղեցին Շուշանիկին սիրող և յարգող Մցիսէթալի քրիստոնեայ ժողովուրդը. նրանք սիրտ առան շուտ շուտ տեսութիւն անելու և միսիթարելու բանտի մէջ կապած Շուշանիկին։ Նորա առաքինի կեանքի համբաւը տարածուել էր ամբողջ Վրաստանի մէջ, և շատերը նորա մօտ գալիս էին ինչպէս ուխաւորներ թէ կանայք և թէ մարդիկ, խընդրում էին նորանից օրհնութիւն, նոյն իսկ հիւանդի համար նորա աղօթքի միջնորդութեանն էին դիմում։ Շուշանիկի ամենամօտիկ պաշտպանը և սփոփողը էր նորա տագը Զոջիկ իշխանը, որը իւր ամուսնու հետ միասին այցելութիւն էին անում Շուշանիկին բանտի մէջ. նըսանք ընկնում էին նորա առաջ և խնդրում էին օրհնութիւն։ Շուշանիկի մօտ բանտը եկան նաև՝ Եպիսկոպոսապետ Սամուելը և Յովհաննէս Եպիսկոպոսը, դրան քահանան և այլ քահանաներ և սարկաւագներ, բերում էին իրանց հետ սրբունի նունէ կուսի ձեռքով որթի ճիւղերից հիւսած հրաշագործ խաչը և իրանց այցելութիւնով միսիթարում էին նորան։

Մէկ անգամ երբ Զոջիկ իշխանը Եպիսկոպոսների հետ միասին Շուշանիկին այցելութեան համար բանտը եկան, Շուշանիկը սիրտ առաւ և սկսեց նրանց առաջ խօսել հետևեալը.

«Ես», ասաց երանելին, երկու ցանկութիւն ունիմ, որոնց կատարուած կուգէի տեսնել և այնպէս մեռնել այս բանտի մէջ։ Առաջին ցանկութիւնս այն է, որ ես իմ զաւակներիս միշտ տեսնեմ հայրենի սուրբ դաւանութեան մէջ ամբացած, իսկ երկրորդ ցանկութիւնս է սրբունի նունէ կուսի ձեռքի խաչը Վրաստանից հեռացուի, մի գուցէ ապագայում անօրէնսերի ձեռքը ընկնի, և այդ հազուագիւտ սրբութիւնը ոշնչանայ։» Այս բանի վրայ մեծ հաւանութիւն տուին երանելի տիկնոջ ասածին թէ Զոջիկ իշխանը և թէ հոգեորականների խումբը։

Այդ ժամանակ Մցիսէթ քաղաքումը գտնւել է ոմն Անդրէաս անունով հայ աբեղայ, որը ս. Սահակայ աշակերտներից էր, Շուշանիկի ցանկութեան համաձայն՝ նորան են յանձնում յիշեալ հրաշագործ խաչը, որ Շուշանիկի հայրենի երկիր Տարօն տանի և այնտեղ սրբութեամբ պահուի։ Անդրէաս աբեղան Վրաստանի հազուագիւտ սրբութեան գանձը տանում է Տարօնի նահանգը և պահում է Առաքելոց վանքի մէջ։ 2)

Այսպիսով՝ Շուշանիկի ցանկութիւններից մէկը կատարուեց, նա իրան մասամբ միսիթարուած էր համարում, որ այն հազուագիւտ սրբութեան ղանձը քրիստոնեայ աշխարհը ուղարկեց պահելու։ Նա իրան օրերը բանտի մութ և նեղ սենեակի մէջ չարչարանքով և տանջանքով,

աղօթքով և ծոմապահութիւնով էր անցկացնում, թէ գիշեր և թէ ցերեկ չէր հանգստանում։ Տարէնը մէկ անգամ Զատկի շաբաթ օրը սուրբ հաղորդութիւն էր ընդունում այն էլ մեծ պատրաստականութիւնով։ Նա զատկի պասի ամբողջ շաբաթը (աւագ օրերին) անսուազ էր մնում և ապա հաղորդում։

Վազգէնը չորս տարի Մցխէթից բացակայ լինելուց յետոյ վերադառնում էյաջողութիւնով։ Նա խկոյն հարց ու փորձ է անում Շուշանիկի մասին, զարմանում է երբ նրան յայտնում են, որ նա տանջանքներից ողջ է մնացել։ Նա խիստ բարկանում է երբ լսում է թէ շատ ուխտաւորներ են գնացել բանալ Շուշանիկին սփոփելու։ Նա նախատեց բանտի պահապաններին ասելով. «Ես ձեզ հրամայել էի, որ ոչ ոքի չը թոյլ տաք բանտի սենակին մօտենալու, իսկ դուք հակառակն էք արել»։ Նա բարկութիւնով հրամայեց սպանել պահապաններին։ Սորանից յետոյ նա աւելի վըրդովուած կատաղի գաղանի նման բանտի մէջ յարձակուեց նաև երանելի տիկնոջ վերայ, նորա ունեցած շղթաներով անխնալ հարուածներ էր հացնում անմեղ զոհին։

Վազգէնը տեսնելով, որ հինգ ամբողջ տարի Շուշանիկին տանջանքների մէջ պահելով չի կարողանում իրան կամքին հնազանդեցնել, նա մի այլ միջոցի դիմեց։ Նա նորա մօտ մի կախարդ

կին նշանակեց, որը կախարդական զանազան միջոցներով աշխատում էր նրան քրիստոնէական հաւատից հեռացնել, բայց ի գուր. որովհետև իւր արած մի տարուայ աշխատանքը ոչ մի օգուտ չը տուին իրան, որ Վազգէնի մօտ պարծենար։

Վազգէնի բարկութեանը չափ չկար։ Նա ուզեց մի այլ բարոյական հարուածով խոցել բանտի մէջ տառապող Շուշանիկի սիրտը, որ նա մորմոքուի և մաշուի և կեանքի թելերը թուլանան։ Նա իւր զաւակներին ստիպեց ուրանալ քրիստոնէական կրօնը, և այս ուրացութեան մասին նա պարծանքով յախնեց պարսից արքայ Յազգերտին, իսկ երանելի տիկնոջ համար յախնեց, որ նորան չը կարողացաւ քրիստոնէական կրօնից հանել որնա Վարդան Մամիկոնեանի դուստրն է, որը արքայից արքայիդ զօրքի հետ պատերազմեց և չը կամեցաւ պաշտել այն կրօնը, որ պաշտում է իւր արքան բոլոր պարսիկ ժողովուրդով։

Շուշանիկի վերայ շատ ծանր ազդեցութիւն արաւ, երբ լսեց իւր զաւակների բռնի կերպով կրօնափոխ լինելը. նա սրտնեղութիւնից այնքան ժամանակ շնչառապ եղաւ, որ հազիւ կարողացն նորան ուշքի բերել. Նա արտասուելով հազիւ հազ սկսեց խօսել կցկտուր ձախով այսպէս. «Վեց ամբողջ տարի չարաչար տանջանքներին դիմացայ, ոչ մի հարուած ինձ վերայ այնքան

աղդեցութիւն չունեցաւ, որքւն որ այս հարւածը, որ անօրէն և անարժան հօր ձեռքով անմեղ գառներս Քրիստոսի փարախից հանուեցան և դէպի կորուսա մատնուեցան։ Այս հարուածը այլ ևս չեմ կարող տանել, շուտով գերեզման պիտի իջնեմ. լաւ է ինձ շուտ մեռնել՝ քան թէ զաւակներիս ուրացած տեսնել։ Վայ եղուկիս, որ միխթարութիւն այլ ևս չը մնաց, իմ առաջին ցանկութիւնս չը կատարուեց, ես այսուհետեւ մայր չեմ կարող լինել իմ խորթացած զաւակներիս համար»։

Երանելի կենդանի նահատակ Շուշանիկը վեց տարի շարունակ անտանելի չարչարանքներ կրեց, երեք անգամ իւր գազանացած չար ամուսնուց չարաչար բոռնցըներով ծեծուեց, բայց նա Աստուծոյ օգնութիւնով մարմնական տանջանքներին դիմացաւ, իսկ այն բարոյական տանջանքը, որ կրեց զաւակների ուրացութեանց համար՝ նորան շատ թուլացրեց, այնպէս, որ նա եօթերորդ տարում այնքան նուազեց, որ ինքն իրան զգաց, որ արդէն իւր մահը մօտենում է, մանաւանդ, որ նա բանտի մէջ վատ էր պահում։ Նա իւր մարմի վերայ կրում էր քուրձ և հնոտի պարեզօտ, ունէր մի կաշուէ բարձ սնարի մօտ և յատակի վերայ էլ մի փսիաթ փուած, որի վերայ պարկում էր նա, նորա բնակարանն էլ այնքան փոքր էր, որ միշտ մաքուր օդի կա-

րօտութիւն ունէր, կերակուրն էլ նոյն սովորական գարէհացն էր և ջուր։ Ահա այսպիսի ճընշուած վիճակի մէջ կորցըրեց նա իւր ֆիզիքական ովֆը և իւր վերայ մահուան նշոններ զգալով յայտնեց իւր դրութեան մասին մտերիմ տագր Զոջիկ իշխանին.

Զոջիկ իշխանը եպիսկոպոսների և քահանաների հետ միասին, Մցիսէթ քաղաքից եկան բանտը և մտնելով Շուշանիկի սենեակը տեսնում են, որ կենդանի նահատակուող երանելի Շուշանիկը արդէն աւանդել է իւր հոգին շղթայակապ և ձեռքերը պարզած դրութեան մէջ։ Նա վախճանուել է 458 թ. հոկտեմբերի 17-ին։

Սրբունի Շուշանիկի թաղման համար շատ աեղերից եկան բանտը թէ եպիսկոպոսներ և թէ քահանաներ ուսարկաւագներ, իսկ ժողովրդի միջից շատ իշխաններ և ազնուականներ, որոնք որոշեցին, որ Շուշանիկի մարմինը Մցիսէթ քաղաքումը չը թաղեն, այլ ուրացեալ Վազգէնի աշքերից խուսափելու համար տարան Ցուրտաւան և այնտեղ թաղեցին։

Վրաց եկեղեցական պատմութիւնից երկում է, որ սրբունի Շուշանիկին Ցուրտաւանում թաղուելուց յետոյ անցնում է հարիւր քսան տարի այն է 578 թուին \* նորա մասունքները

\*) Վրաց Կիւրիօն կաթողիկոսի ժամանակ,

Յուրտաւանից հանդէսով տեղափոխում են թիֆ-  
լս և Մետեխի ամրոցի եկեղեցւոյ աւանդա-  
տան մէջ թաղում, ուր որ կայ մինչև ցայսօր։  
Մասունքների տեղափոխութեան տօնը վրաց  
եկեղեցին կատարում է օգոստոսի 28-ին, իսկ  
հայոց եկեղեցին միայն տօնում է նորա մտհ-  
ւան օրը հոկտեմբեր ամսին։

Այսպիսով սրբուհի Շուշանիկը մեռնում է  
օտար հողի վերայ բռնութեան լծի տակ տոանց  
մի օգնականի և առանց հայրենական տնից ու-  
նեցած սփոփանքից։ Եւ ով պէտք է օգնէր նո-  
րան իւր հայրենի երկրից, ուր որ պարսից  
մարզպանների ձեռքով Հայաստանից արհա-  
ւիրքները անպակաս էին։ Զը կար նորա հայր  
Վարդանը, նա արդէն եօթ տարի առաջ նահա-  
տակուել էր իւր Հմայեակ եղբօր և այլ երևելի  
նախարարների հետ։ Զը կային ազատ գործող  
հոգեոր պետերը. որովհետև գեր երջանիկ Յով-  
սէփ կաթոիկոսը, Սահակ և այլ նշանաւոր ե-  
պիսկոպոսները, երանելի Ղեոնդ էրէցը և այլ  
անձնանուէր քահանաները Վարդանանց սուրբ  
պատերազմից յետոյ Հայաստանից աքսորւեցան  
և ի վերջոյ բանտի մէջ նահատակուեցան։ Այս-  
պիսով սրբուհի Շուշանիկը անջատուած իւր  
հայրենի երկրից և սիրասուն զաւակներից զըր-  
կուած, իւր ուրացող ամուսնու ձեքով կենդանի  
նահատակուածը մարմնով մեռնում է, իսկ հոգ-

ով նա Աստուծոյ առաջ պարզ երես կանգնած  
միանում է այն բարի մարդոց հոգիների հետ,  
որոնք հայրենիքի պաշտպանութեան համար  
հայրենի սուրբ գաւանութեան մէջ մնալով դոհ-  
ւել են անօրէններից։ Սուրբ Վարդանը քրիս-  
տոնէական հոգւով վառուած հայրենիքի պաշտ-  
պանութեան համար սուրբ ձեռքին ընկաւ պա-  
տերազմի մէջ դիւամօլ Յազկերտի զօրքից, իսկ  
նորա դուստր Վարդենի-Շուշանիկը նոյն միջոց-  
ներին միենայն հոգւով վառուած Վրաստանի  
մէջ մահաբեր հալածանքների տակ վեց տարի  
ճնշւում է մի նոր Յազկերտ-Վազգէնից։ Կարծես  
վերին նախախնամութեան ջնորհն էր, որ հայրը  
իւր աղջկայ հետ աներևոյթապէս միացած ու-  
ժով դիմագրել են զրադաշտական կրօնի տա-  
րածման դէմ։

Սուրբ Վարդանանց պատերազմից յետոյ  
Հայաստանի մէջ բացարձակ պաշտուեց քրիստո-  
նէական հաւատը, նոյնը եղաւ և սրբուհի Շու-  
շանիկի մահից յետոյ Վրաստանի մէջ։ Ուրացող  
Վազգէնը իւր արժանի պատիժը ստացաւ, որի  
մահից յետոյ քրիստոնէական հաւատը համար-  
ձակ պաշտուեց։

Վարդանանց սուրբ պատերազմի մէջ հայ Վա-  
սակ սիւնին դաւաճանեց քրիստոնէական կրօ-  
նին, իսկ Վրաստանի մէջ ուրացող Վազգէնը,  
երկուսն էլ արժանի պատիժ ստացան։ Յ).

## ՅԱՀԵԼՈՒԱԾ

1. ՊԱՐՄԻՑ ԶՐԱԴԱՇՏԱԿԱՆ ԿՐՈՆԸ: Հինգերորդ  
դարու սկզբներին, երբ Հայոց Արշակունեաց թա-  
գաւորութիւնը վերջացաւ, պարսիկները զրադաշ-  
տական կրօնի երկրպագուներ էին և կուսպաշ-  
տական քուրմերի փոխարէն՝ ունէին շատ մողեր  
և մողպետներ: Զրադաշտական կրօնը քարոզում  
էր թէ արեգակն է երկնքի և երկրի ստեղծողը,  
որին Միհր աստուած էին անուանում: Նրանք  
տինպէս էին ընդունում, որ միմիայն արեգակն  
է երկնքին և երկրին լոյս տւողը և բոլոր մար-  
դոց, կենդանիներին և բոյսերին աճեցնող—կեանք  
տւողը: Պարսիկները բացի Միհր մեծ աս-  
տըծուց ընդունում էին նաև Որմիզդին իբրև  
բարեաց աստուած և Արհմին իբրև չարեաց աս-  
տուած, որոնք ծնուել են իրանց հայր Զրուանի  
արգանդից: Զրադաշտական կանոններով պարսիկ-  
ները երկրի վերայ արեգակի փոխարէն կրակն  
էին պաշտում, որը նրանց կարծիքով արեգակի  
նման լոյս և տաքութիւն է տարածում: Կրակը  
անհանգչելի պիտի պահուէր այն ատրուշան-  
ների (գումբեզների) մէջ, ուր որ ժողովուրդը  
արեգակի ծագելու ժամանակ մօտենում էր  
աղօթելու համար: Կրակ հանգցնողը մահուան  
պատժի էր ենթարկում: Զրադաշտական կրօնի  
արևապաշտութիւնը և կրակապաշտութիւն չը

չընդունելու համար պարսիկների սրերին զո-  
հուեցան Վարդանանց պատերազմից առաջ Ատոմ  
զօրավարը իւր մի զունդ զօրքով, որոնք «Ա-  
տովմեանք» կոչուեցան: Սորանից յետոյ պա-  
տերազմի մէջ նահատակուեց սուրբ Վարդան  
Մամիկոնեան զօրավարը իննը երեելի նախա-  
րարներով և զօրքերով, որոնք «Վարդանանք»  
կոչւեցան: Վարդանանց սուրբ պատերազմից  
յետոյ նահատակուեցան նաև այն ժամանա-  
կուայ կաթողիկոս Յովաէփ Վայոց Զորեցին, Սա-  
հակ Ռշտունեաց եպիսկոպոսը, Վանանդեցի Ղե-  
ւոնդ, Խորէն, Աբրահամ, Արշէն և այլ քահանա-  
ները սարկաւագներով, որոնք «Ղեոնդեանք» կոչ-  
ւեցան: Նոյն զրադաշտական կրօնը ընդունելու հա-  
մար գիմադրութիւն արաւ և որբուհի Շուշանիկը,  
որ վեց տարի շարունակ կենդանի նահատա-  
կութիւն կրեց թէ Մցիւէթ քաղաքումը և թէ  
բանտումը, և բնական մահով իբրև նահատակ  
ոտքերը շղթայած մեռաւ, հաստատ մնալով քրիս-  
տոնէութեան մէջ:

2. ՄՐԲՈՒՀԻ ՆՈՒՆԵ ԿՈՒՆԻ ՀՐԱՇԱԳՈՐԾ ԽԱԶԸ:  
Մամիկոնեան տոհմի շառաւիդ անուշահոտ  
ծաղիկ շուշան Շուշանիկը՝ իւր բանտարկու-  
թեան ժամանակ երկու ցանկութիւն ունէր: Ա-  
ռաջինը այն էր, որ նա ցանկանում էր տեսնել  
իւր զաւակներին մայրենի եկեղեցւոյ դաւա-  
նութեան մէջ, երկրորդ ցանկութիւն էլ այն էր,

որ Մցխէթի Վրաց մայր եկեղեցւոյ մէջ պահած սրբուհի նունէ կուսի ձեռքին գործածուած հրաշագործ խաչը՝ անօրէնների ձեռքով չը ոչնչանալ: Նա վախենում էր, որ ուրացող Վաղգէնի բարբարոսութեանը կը զոհուի մայր եկեղեցւոյ մէջ եղած նշանաւոր սրբութիւնները, որոնց մէջ գլխաւորն էր ս. նունէի խաչը, որը հիւսած էր որթի բարակ ճիւղերից և ինչպէս աւանդութիւնը ասում է խաչի հիւսած մասերը մէկ տեղ միացնելու համարնա գործ է ածել իւր սեփական ծամերը: Սրբուհի Շուշանիկը Զոջիկ իշխանի, վրաց եպիսկոպոսապետ Սամուէլի, Յովհանն եպիսկոպոսի և արքունի դրան քահանալի հաւանութիւններով ս. նունէ կուսի հիւսած խաչը ուղարկում է իւր հայրենի երկիր Տարօնի նահանգը, ուր որ պահում է ս. Ղազարու Առաքելոց վանքի մէջ: Խաչի ուղարկուելը կատարւում է ուրացող Վաղգէն իշխանի բացակայութեան ժամանակ: Խաչը յանձնում են Անդրէաս անունով հայ աբեղային, որը այդ միջոցին Մըցխէթ քաղաքումն էր եղել: Անդրէաս աբեղան մայր եկեղեցւոյ այլ սրբութիւնների հետ վերցրած որթէ խաչը գաղտագողի ճանապարհով Վրաստանից հեռանում է և համնելով Հայաստանի Սպեր գաւառը եօթը տարի պահում այստեղի բերդի մէջ. որովհետև այն երկիրը խառնակ վիճակի մէջ լինելով Անդրէաս աբեղան իւր ճա-

նապարհորդութիւնը չէ կարողանում շարունակել: Այդ միջոցին իմանում է նա Մըբուհի Շուշանիկի մահուան լուրը և յայտնում է Տարօնոյ իշխան Գրիգոր Մամիկոնեանին (Վարդան Մամիկոնեանի եղբօր որդի) Շուշանիկի մահը և իւր հետ բերած հրաշագործ խաչի պահպանութեան համար ապահով ճանապարհորդութիւն է խընդրում, և որը կատարւում է: Անդրէաս աբեղան Մամիկոնեան Գրիգոր իշխանի հասցրած օգնութիւնով հրաշագործ խաչը տարւում է Երասխանորդի Կապուտա բերդը և պահուում է Ս. Խաչ վանքի մէջ և յետոյ Վանանդ է տարւում պահելու: Սոյն երկու տեղերում խաչը պահուում է 459 տարի, ապա Վանանդից տարւում է Կարս քաղաքը և 164 տարի պահուում է այստեղ, իսկ յետոյ Բագրատունեաց թագաւորների ժամանակ Կարսից խաչը տեղափոխում են Անի, որի մայր եկեղեցւոց մէջ 142 տարի է պահուում: Երբ թաթարները 1239 թուին Անի քաղաքը աւերեցին, այդ ժամանակ հրաշագործ նունէի խաչը բերւում է Վրաստան: Հինգ հարիւր տարիից յետոյ երբ պարսիկները Վրաստանի վերայ յարձակումներ էին անում 1749 թուին ս. նունէ կուսի խաչը տարւում Ս-Պետերբուրգ պահելու համար: Վրաստանը Ռուսիայի հետ միանալուց յետոյ 1811 թուին խաչը Պետերբուրգից վերադարձնուում է Վրաստան: Այժմ յիշեալ հը-

բաշագործ խաչը գտնւում է Թիֆլիսի Սիօն՝  
Ա. Աստուածածնայ մայր եկեղեցւոյ մէջ, ուր  
տարին մի անգամ ո. Նունէ կուսի տօնին  
(յունվարի 14) հրաշագործ խաչը թափորով դուրս  
է բերւում ուխտաւարների համար:

Այսպիսով երանելի նահատակ ո. Շուշա-  
նիկի մի միայն երկրորդ ցանկութիւնն է կա-  
տարում, իսկ առաջին ցանկութիւնը կատա-  
րուած չը տեսաւ, նորա զաւակներին բանութիւ-  
նով ուրացրին ճշմարիտ Աստըծուն, որը նորա  
մահուան մօտենալուն նպաստեց: Սրբուհի Շու-  
շանիկի շնորհիւ ո. Նունէ կուսի հրաշագործ  
խաչը մի քանի հարիւր տարի թշնամիներից ա-  
պահով պահուել է Տարօնոյ նահանգի և Հայ-  
աստանի զանազան վանքերի մէջ: Այսօր Վրաս-  
տանի այդ սրբութեան զանձը իւր գոյութիւնով  
1600 տարից աւելի է բոլորում և լիշեցնում է  
նա ո. Նունէ կուսի առաքելական գործերը և  
նորա հրաշագործ խաչին ո. Շուշանիկի արած  
պաշտպանութիւնը: Վրաստանի մի հին ոուրբ  
զանձը մի քանի հարիւր տարի Հայաստանի  
վանքերի մէջ պահուելով կրկին արժանանում  
է Վրաստանի մէջ պահպանուելու:

3. ՎԱԶԳԻՆԻ ԱՐԺԱՆԻ ՊԱՏԻԺԼ ԵՒ ԹԻՄՑՈՆԵ-  
ՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ: Պարսից Յագկերտ  
արքայի մահից յետոյ, նորա տեղ թագաւոր ե-

դաւ Պերողը, որի թագաւորութեան ժամանակ  
քրիստոնեալ աշխարհների մէջ կոապաշտութիւ-  
նը թուլացաւ, այնպէս, որ հպատակ քրիստո-  
նեալ ժողովուրիզը հոգէպէս նորից ոյժ առաւ,  
որով քրիստոնէական կրօնը վերականգնուեց  
ինչպէս Հայաստանում՝ նոյնպէս և Վրաստա-  
նում: Քրիստոնէական կրօնը Վրաստանում վե-  
րականգնեցնելու համար՝ վրաց բգեշի Վախ-  
տանգ Գուլգալանը պարսից Պերող թագաւորի  
ունեցած թուլութիւնից օգուտ քաղելով իւր  
հետ միացրեց վրաց ծածուկ քրիստոնեայ իշ-  
խաններին և ազնուականներին և եղերական  
մահով վերջ տուեց ուրացող Վազգէն իշխանի  
կեանքին և ինքը թագաւոր դառնալով Վրաս-  
տանի մէջ ջնջել տուեց կրակապաշտեան  
կրօնը: Վախտանգ Գուլգալան թագաւորը փըրկ-  
չական 469 թուին կուր գետի հովառում Մետե-  
խի ամրոցի շուրջը նոր քաղաք է հիմնում հան-  
քային տաք ջրերի առատ տեղում, որի անունը  
դնում է Թբիլիս, որ վրաց լեզով կը նշանակէ  
տաք: Վախտանգը իւր թագաւորական պալատը  
Մցխէթից Թբիլիս (Թիֆլիս) տեղափոխելով  
նախ շինում է վրաց մայր եկեղեցի Սիօնի  
սուրբ Աստուածածին անունով, և մի այլ եկե-  
ղեցի Մետեխի ամրոցի մէջ նոյնպէս սուրբ Աս-  
տուածածին անունով, ուր որ այժմ ամփո-  
փուած է սրբուհի Շուշանիկի մասունքները:

բաշագործ խաչը գտնւում է Թիֆլիսի Սիօն։  
Ա. Աստուածածնայ մայր եկեղեցւոյ մէջ, ուր  
տարին մի անգամ ս. Նունէ կուսի տօնին  
(յունվարի 14) հրաշագործ խաչը թափորով դուրս  
է բերւում ուխտաւարների համար։

Այսպիսով երանելի նահատակ ս. Շուշա-  
նիկի մի միայն երկրորդ ցանկութիւնն է կա-  
տարւում, իսկ առաջին ցանկութիւնը կատա-  
րուած չը տեսաւ, նորա զաւակներին բանութիւ-  
նով ուրացրին ճշմարիտ Աստըծուն, որը նորա  
մահուան մօտենալուն նպաստեց։ Սրբուհի Շու-  
շանիկի շնորհիւ ս. Նունէ կուսի հրաշագործ  
խաչը մի քանի հարիւր տարի թշնամիներից ա-  
պահով պահուել է Տարօնոյ նահանգի և Հայ-  
աստանի զանազան վանքերի մէջ։ Այսօր Վրաս-  
տանի այդ սրբութեան գանձը իւր գոյութիւնով  
1600 տարից աւելի է բոլորում և յիշեցնում է  
նա ս. Նունէ կուսի առաքելական գործերը և  
նորա հրաշագործ խաչին ս. Շուշանիկի արած  
պաշտպանութիւնը։ Վրաստանի մի հին ոռորք  
գանձը մի քանի հարիւր տարի Հայաստանի  
վանքերի մէջ պահուելով կըկին արժանանում  
է Վրաստանի մէջ պահպանուելու։

---

3. ՎԱԶԳԻՆԻ ԱՐԺԱՆԻ ՊԱՏԻԺԲԸ ԵՒ ԹԻՄՑՈՆԵ-  
ՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ։ Պարսից Յագկերտ  
արքայի մահից յետով, նորա տեղ թագաւոր ե-

դաւ Պերողը, որի թագաւորութեան ժամանակ  
քրիստոնեալ աշխարհների մէջ կոապաշութիւ-  
նը թուլացաւ, այնպէս, որ հապատակ քրիստո-  
նեալ ժողովուրդը հոգէպէս նորից ոյժ առաւ,  
որով քրիստոնէական կրօնը վերականգնուեց  
ինչպէս Հայաստանում՝ նոյնպէս և Վրաստա-  
նում։ Քրիստոնէական կրօնը Վրաստանում վե-  
րականգնեցնելու համար՝ վրաց բղեշս Վախ-  
տանգ Գուլգապանը պարսից Պերող թագաւորի  
ունեցած թուլութիւնից օգուտ քաղելով իւր  
հետ միացրեց վրաց ծածուկ քրիստոնեայ իշ-  
խաններին և ազնուականներին և եղերական  
մահով վերջ տուեց ուրացող Վազգէն իշխանի  
կեանքին և ինքը թագաւոր դառնալով՝ Վրաս-  
տանի մէջ ջնջել տուեց կրակապաշութեան  
կրօնը։ Վախտանգ Գուլգապան թագաւորը վըրկ-  
չական 469 թուին կուր գետի հովտում Մետե-  
խի ամրոցի շուրջը նոր քաղաք է հիմնում հան-  
քային տաք ջերի առատ տեղում, որի անունը  
գնում է Թբիլիս, որ վրաց լեզով կը նշանակէ  
տաք։ Վախտանգը իւր թագաւորական պալատը  
Մցիւէթից Թբիլիս (Թիֆլիս) տեղափոխելով  
նախ շինում է վրաց մայր եկեղեցի Սիօնի  
սուրբ Աստուածածին անունով, և մի այլ եկե-  
ղեցի Մետեխի ամրոցի մէջ նոյնպէս սուրբ Աս-  
տուածածին անունով, ուր որ այժմ ամփո-  
փուած է սրբուհի Շուշանիկի մասունքները։

Թբիլիս քաղաքը Վրաստանի մայրաքաղաք  
է գառնում 499 թուին Վախտանգ թագաւորի  
որդի Դաչի թագաւորի ժամանակ, իսկ հին  
Մցիւէթ մայրաքաղաքը իւր հին մայր Եկեղեցի-  
ով դառնում է վրաց կաթողիկոսանիստ:

Այս գրքով կազմելիս օգտուել եմ Եղիշէ, Ըն-  
տիր Հայկագունք, Սոփերք Հայկական գրքերից և  
մասամբ Վրաց Եկեղեցական պատմութիւնից,  
որ մինչև վեցերորդ դարը հայկական և յունա-  
կան աղբիւրներից է ստուգված:



Եր.	Էջ.
9	4 նախորարներով — նախարարներով
10	17 թաղաւորների — թագաւորների:
10	22 կապկապեց — կապ կապեց:
11	18 քիստօնհայ — քրիստօնհայ:
11	23 հեա — հետ.
14	21 գնում — գնում:
16	8 հեռեցնումէր — հեռացնում
18	5 կորուոտը — կորուստը.
20	23 կտպած — կապած.
24	23 ամբոջ — ամբողջ:
25	15 կարողացաւ — կարողացաւ
28	19 կաթոփիկոսը — կաթողիկոսը

2013

13353

